

## **«Արդյունավետ հանրային խոսք. ներկայացման հմտություններ» թեմայով եռօրյա դասընթաց Դիլիջանում**

Սիրով տեղեկացնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 12-ից մինչև օգոստոսի 14-ը Առողջապահության ազգային ինստիտուտը, «Տա՛նույս» գիտակրթական կենտրոնի հետ համատեղ, կազմակերպում է «Արդյունավետ հանրային խոսք. ներկայացման (Powerful Presentation Skills) հմտություններ» թեմայով եռօրյա դասընթաց: Այն անցկացվելու է Դիլիջանի Վանատուր հյուրանոցում:

Ժամանակակից գործնական աշխարհում հաջողության հասնելու կարևոր նախապայման է հաղորդակցական, հանրային խոսքի և ներկայացման հմտությունների արդյունավետ համակցությունը: Այն հնարավորություն է տալիս խոսքն առավել նպատակային և ազդեցիկ դարձնել թե՛ անձնական, թե՛ գործնական կյանքում:

### **Դասընթացի հիմնական նպատակն է**

Մասնակիցներին փոխանցել այնպիսի հմտություններ ու գիտելիքներ, որոնք կնպաստեն առավել հստակ, կառուցվածքային և ազդեցիկ խոսքի ձևավորմանը, ինչի արդյունքը դառնում են ինքնավստահությունն ու մասնագիտական հաջողությունները:

### **Դասընթացի բովանդակությունը**

- ✚ Հաղորդակցության հիմնական տեսակներն ու առանձնահատկությունները
- ✚ Արդյունավետ և թիրախավորված հանրային խոսքի կարևորությունը
- ✚ Սահմանված հիմնախնդիրներին համապատասխան շնորհանդեսի մշակում
- ✚ Թիրախային լսարանի բնորոշում
- ✚ Արդյունավետ շնորհանդեսի հիմնական կառուցվածքն ու մարտահրավերները
- ✚ Ազդեցիկ խոսքի հնարքներ, ուշադրության գրավում և պահպանում
- ✚ Լեզվական և հարլեզվական հնարքներ
- ✚ Ժեստերի լեզվի կարևորությունը
- ✚ Խոսքի «երթևեկության նշաններ»
- ✚ Ժամանակի արդյունավետ կառավարում
- ✚ Խոչընդոտների կանխատեսում, խնդրահարույց լսարանի/մասնակիցների կառավարում
- ✚ Հուզական բանականության կարևորությունը հանրային խոսքում
- ✚ Լսարանին նյարդայնացնող սովորություններ
- ✚ Ինտերակտիվության ապահովում
- ✚ Ազդեցիկ վերջաբան

- ✚ Հարց ու պատասխանի արդյունավետ կազմակերպում
- ✚ Ակտիվ լսելու ունակություն
- ✚ Անկանխատեսելի իրավիճակներ և դրանց արդյունավետ կառավարում
- ✚ Հետադարձ կապի կարևորությունը
- ✚ Ժամանակակից գործնական շնորհանդեսի հիմնական տեխնիկական պահանջները

### **Դասավանդման մեթոդներ և կիրառվող վարժանքներ**

Դասավանդման ընթացքում կիրառվում են ժամանակակից մեթոդներ, հնարքներ, իսկ արդյունավետությունն ապահովող հիմնական վարժանքներից են.

- ✚ Խմբային աշխատանքները
- ✚ Իրավիճակային վերլուծությունները
- ✚ Իրական շնորհանդեսների մշակումը
- ✚ Անհատական և խմբային հետադարձ կապը
- ✚ Տեսահոլովակները

### **Դասընթացի հիմնական արդյունքները**

Դասընթացի ավարտին մասնակիցները կտիրապետեն արդյունավետ հանրային խոսքի, ազդեցիկ շնորհանդեսի մշակման հիմնական հնարքներին և տեխնիկաներին, կկարողանան կառավարել իրենց հոյզերը: Արդյունքում՝ կամրապնդեն ինքնավստահությունը, խոսքն առավել կառուցվածքային և համոզիչ կդառնա:

**Տևողություն՝ 10 ժամ**

**1 խմբում ներգրավված մասնակիցների քանակ՝ 12-20**

**Լեզուն՝ Հայերեն**

Դիմումներն ընդունվում են 2022թ. օգոստոսի 2-12-ը

? Հարցերի դեպքում դիմել ԱԱԻ-ի ուսումնական բաժին

☎ +374 77 19-99-82 +374 11 30-00-88

Կից կարող եք տեսնել դասընթացավարի ինքնակենսագրականը

## Լարինա Բիչախյան

Միջազգային վկայագրված դասընթացավար, ով ունի ղեկավարման և գործարար հմտությունների դասընթացների իրականացման ավելի քան 20 տարվա փորձ՝ կրթական, բանկային, միջազգային նախագծերի և այլ ոլորտներում: Նրա պորտֆոլիոն ներառում է այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են՝ Inecobank, Ameriabank, ProCredit Bank, Converse Bank, ID Bank, Onex, Kinnda, Macadamian, Monitis, Cinema Star, Synergy, WWF, Quick Start, Monitis, Cinema Star, Synergy, WWF, Concern-Energomash, The Institute of Global Professionals (Bangladesh), Brilyanz Consulting (Qatar) և այլն:

Ուսանել է Երևանի պետական համալսարանում, Պրոկրեդիտ բանկի միջին օղակի ղեկավարների համար նախատեսված ակադեմիայում (Վելես, Մակեդոնիա): Մասնակցել է Հարվարդի համալսարանի իրավաբանական դպրոցի կողմից իրականացված «Բարեկեցություն կրթության միջոցով. Առաջնորդության և բանակցությունների դերը» թեմայով դասընթացին (CMG (Conflict Management Group) Քենբրիջ, ՄԱ, ԱՄՆ), St Mark and St John քոլեջում Միջազգային դասընթացավարների համար նախատեսված դասընթացին (Պլիմուտ, Միացյալ Թագավորություն), ավարտել է Chartered Management Institute-ի կողմից իրականացվող «Ղեկավարում և առաջնորդություն» 5-րդ մակարդակի լիարժեք դասընթացը (Միացյալ Թագավորություն):

Ունի բանասիրական գիտությունների թեկնածուի կոչում:

Հայաստանում ֆրանսիական համալսարանում ղեկավարել է անգլերեն լեզվի ամբիոնը, Պրոկրեդիտ բանկում աշխատել է որպես Վերապատրաստումների բաժնի համակարգող, Երիտասարդ բանկիրների ծրագրի պատասխանատու, դասավանդել է Պրոկրեդիտ Բանկի բարձր օղակի ղեկավարների ակադեմիայում (Ֆյուրտ, Գերմանիա), աշխատել է Ամերիա բանկում՝ որպես Վերապատրաստումների և զարգացման թիմի ղեկավար, համակարգել «Ամերիա սերունդ» ծրագիրը:

Ներկայումս հանդիսանում է ֆրիլանսեր-դասընթացավար, ով համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ և վարում իր հեղինակած ղեկավարման և գործարար հմտությունների վերաբերյալ դասընթացներ: